

Գ. Ազնավուրյան

ՐԱՖՖՈՒ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Վերջին ժամանակներն հատուկ հետաքրքրություն է նկատվում Րաֆֆու գրական ժառանգության ուսումնասիրության ուղղությամբ:

Րաֆֆին թողել է գրական մեծ ժառանգություն, այդ թվում բազմաթիվ նամակներ, որոնք իր ժամանակին նրա կինը՝ Աննա Րաֆֆին հավաքել և պահել է իր մոտ: Առայժմ անհայտ է, թե դրանց որ մասն է փնայել և ում մոտ է գտնվում: Անցյալում, հայ պարբերական մամուլում տրայվել են Րաֆֆու գրած մի շարք նամակները, որոնք փրկվել են կորստից:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի տարրեր ֆոնդերում պահպանվել են Րաֆֆու գրչին պատկանող մի քանի տասնյակ անտիպ նամակներ, որոնց հրապարակումը կոգներ ուսումնասիրողներին և մեր գիտնականներին, ավելի կոնկրետ և հստակ պատկերացնելու Րաֆֆու կյանքն ու գործունեությունը, դադարաբեկ կազմելու նրան հուղող կենսական հարցերի մասին:

Հնարավորություն չունենալով տպագրության հանձնել այդ բոլոր նամակները, նպատակահարմար համարեցինք դրանցից առավել կարևորները հրատարակել այս հաղորդման մեջ:

Րաֆֆու հետաքրքրական նամակներից մեկը պետք է համարել «Մշակ»-ի խմբագիր՝ Գր. Արծրունուն ուղղած նամակը: Րաֆֆին, որպես «Մշակ»-ի նախկին ակտիվ աշխատակիցներից մեկը, շահագրգռված է եղել ոչ միայն նրա վերահրատարակության, այլև կոնկրետ դեկլարությունը ձեռնհաս մարդկանցով ապահովելու, թարմ, երիտասարդ ուժեր ներգրավելու հարցով, որպեսզի թերթը հաջողություն ունենա մասսաների մեջ: Այդ նամակը միաժամանակ հետաքրքրական մանրամասնություններ է պարունակում Րաֆֆու և Արծրունու փոխհարաբերության մասին:

Նամակներից երկուսն ուղղված են Ներսես Աբելյանին, որն այդ թվականներին էլ միաժամին Գեորգյան ճեմարանի ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչն էր և մտերմական կապեր ուներ Րաֆֆու հետ: Վերջինս անկեղծ ձևով նրան գրում է գրական և հասարակական մի շարք հարցերի մասին:

Մի այլ նամակ ուղղել է գրող-գրամատուրգ Ալեքսանդր Աբելյանին: Նամակում հետաքրքրական մանրամասնություններ կան կապված «Մամուլ» վեպի հղացման գրգալատճառների, գրականության հասարակական վերափոխիչ դերի և այլ հարցերի մասին: Նամակներից մեկը ուղղված է Ռ. Պատկանյանին: Այդ նամակից երևում է Րաֆֆու և Պատկանյանի անձնական մտերմությունը: Նա ցանկացել է լսել նրա գրավոր կամ բանավոր կարծիքը իր ստեղծագործությունների մասին:

Թիֆլիս, 18 հոկտեմբեր
1885 թ. ամ.

ՀԱՐԳԵԼԻ ԳՐԻԳՈՐ [ԱՐԾԻՈՒՆԻ]

Ստացա Ձեր նամակը։ Ուրախ եմ, որ «Մշակը» իրավունք ստացավ կրկին հրատարակելու։

Ես սպասում էի, որ Դուք կհրավիրեք ինձ և ինձ հետ «Մշակի» մի քանի բարեկամներին՝ միասին խորհելու, թե ինչպես և ինչ կարողացվում էր պետք է սկսել նրա վերականգնման հարաբերությունները, բայց Դուք հրավիրում եք ինձ, որպես «Մշակի» հին աշխատակցին, միայն աշխատակցելու։ Շնորհակալ եմ Ձեր բարի ուշադրության համար, բայց շատ ցավում եմ, որ ինձ անհնար կլինի ընդունել Ձեր առաջարկությունը։

«Մշակի» զբաղվածությունը անորոշ տեսնելով, Դուք, որպես հայտնում եք Ձեր նամակի մեջ, զմայարանում եք մեծել, թե երբ և որքանով կարող կլինեք վարձատրել իմ աշխատությունները։ Ես ամենայն սիրով կհամարվեի «Մշակի» զբաղված հետ, և թե զիտնայի, որ «Մշակի» փոքրը ՄԻՄԻԱՅՆ «ՄՇԱԿԻ» ՎՐԱ դորձ կդրվեին և ավել փող չէր մնա ինձ վարձատրելու համար, իհարկե, Ձեզ մի չափավոր ապրուստ դուրս դալուց հետո։ Այո, ես կհամարվեի և կպատանի իմ վարձատրությունը «Մշակի» հաջողություններից, նրա բաժանորդների բազմությունից։ Բայց, որպեսզի այդ հաջողությունը հուսալի լինի, հարկավոր է, նախ, որ նրա խմբագրությունը օրինապոր պայմաններին մեջ գրվի, երկրորդ, որ մեր հարաբերությունները կատարելապես որոշված լինեն թե զեպի Ձեզ և թե զեպի «Մշակը»։

Ես երբեք այսպես խոստացանք չէի լինի, և թե մեր մեջ մնացած լինեք առաջվա մտերմությունը և փոխադարձ հավատը։ Բայց անցյալ փորձերը, այն դեպքում, երբ փորձերը ինձ սովորեցրին, որ ավելի լավ է դորձի սկզբից ամեն պայման որոշել, քան թե ապագայի համար անբավականությունների պատճառներ թողնել։

Խնդրեք բոլորովին այլ կլինեք, եթե իմ զբաղվածությունը փոքր ի շատե անհանգիստ լինեք, և ես զրեի միմիայն իմ անձնական բավականությունների համար։ Բայց ես ապրում եմ իմ զբաղման աշխատանքով և, բացի ինձանից, մի ամբողջ ընտանիքի ապրուստը պետք է այդ աշխատանքից հայթայթելի։ Ուրեմն ես չեմ կարող չզոհաստել իմ աշխատանքը, թեև ումանք, մինչև անգամ քաղաքատնտեսներ, սովորել են աշխատանքի վարձատրությունը ստացողի կողմից անհատական կոչել...

«Մշակի» հրատարակությունը այժմ ավելի զմայար է և ավելի աշխատանք է պահանջում, քան որեւէ ժամանակ։ Նրա խմբագրատան մեջ ծառայողը ոչ միայն պետք է զրե, այլ ուրիշ շատ կողմնակի աշխատանքներ պետք է կատարե, որ թեթեւ տարածվի, որ բաժանորդների թիվը ավելանա։ Ես մեկնույն ժամանակ պետք է մզե ամենատեսակի պատերազմ հակառակ կուսակցությունների հետ, որոնք իրանց ուժերով՝ անհամեմատ զորավոր են և կդրանան։ «Մեկուն» այժմյան կաթողիկոսի օրով կղերի կիսապաշտոնական օրդան կդառնա։ Թեմակալ առաջնորդները, վիճակները հաջորդները, քահանաները, նրա գործակալները կլինեն, ամեն տեղ կտարածեն, գուցե «Արարատի» նման պարտադիր կանեն շատերին ստանալ։ «Նոր դարը» պատրաստություններ է տեսնում առաջիկա տարվանից նոր ուժերով հանդես դալու, — «Արձադանքը» նույնպես։ Ինչո՞վ պետք է «Մշակը» մրցե զրանց հետ։ Իր անցյալով։ — Այդ բավական չէ։

Ես ավելի ազնիվ եմ համարում անախորժ համարություններ ասել Ձեզ, քան թե շատերի նման շողոքորթել։ Դուք թե «Մշակի» անունը և թե Ձեր անցյալը վտանգի տակ դրած կլինեք, եթե Ձեր այժմյան ուժերով կսկսեք «Մշակի» հրատարակությունը։ Այժմ հասարակությունը ավելի պահանջող է դարձել, ավելի մեծ ակնկալություններ ունի «Մշակից»։ Զգոված լինելով մյուս պարբերական հրատարակություններից, ես ամեն ինչ «Մշակից» է սպասում։ Եթե Դուք չկարողացաք նրա պահանջներին բավարարություն տալ, — ամեն հույս հաջողություն համար պետք է կորած համարել։ «Մշակի» գոյությունը և նրա հաջողակ հարստությունը նույնքան մոտ լինելով իմ սրտին, որքան Ձերին, ես թույլ եմ տալիս ինձ պարզապես ասել Ձեզ, որ Դուք, մանավանդ Ձեր այժմյան վիճա-

* Բոլոր ընդգծումները հեղինակինն են։

կուս, անկարող կլինեք գործի ծանրութիւնը միայնակ տանել,— Դուք ավելի խոհեմ վարված կլինեք, եթե կհաժարեք։ Ձեր շուրջը մի խումբ համեմատաբար անձինք, որոնք թէ բարոյապես և թէ նյութապես կառված լինեն լրագրի խմբագրատան հետ, որոնք իրանց մեջ բաժանեն յոյր աշխատանքները։ Փուլթ չէ, եթե այդ խումբը փոքր լինի թվով, և ավելի լավ է, որ փոքր լինի, բայց անհրաժեշտ է, որ լինի նա։ Թե ինչ անձինքներից և ինչպէս կկազմակերպեք այդ խումբը,— դա Ձեր գործն է, միայն առանց խումբի որեւէ հաջողութիւն սպասել՝ պետք է կատարյալ ինքնախաբերութիւն համարել։

Դուք բոլորովին կզղկացած եք, պ. Արծրունի և այդ դրութիւնը ոչ սակավ թուլացրեց Ձեր եռանդը, խլեց Ձեր հալատը թէ զեպի աշխարհը և թէ զեպի գործը, և զբեց Ձեզ անխուսափելի վատութիւն մեջ։ Դա սարսափելի դրութիւն է, երբ մարդ կորցնում է հալատը։ Նա սկսում է այնուհետեւ իր հետ պատահած ամեն չարիքների, ամեն զգալի-տութիւնների արժանները ուրիշների մեջ որոնել, առանց ինքն իրան ջննելու։ Նրա հա-վատարանկողութիւնը իր ներքին աշխարհի և արտաքին աշխարհի հետ խախտում է...

Դուք ապրում եք անապահով մեջ պ. Արծրունի։ Ձեր մթնոլորտի օդը սաստիկ ծանրացած է, սաստիկ սպանիչ է. պետք է մի նոր հոսանք բաց թողնել այնտեղ, որ կեն-դանութիւն ստանա, եթե ոչ, Դուք կորած եք։

Դուք սիրում եք ճշմարտութիւնը այն ժամանակ միայն լսել, երբ չարիքը արդեն կատարված է, բայց սկզբում նա վրդովեցնում է Ձեզ, ևս համոզված եմ, որ այդ նամակը նույնպես կվրդովեցնէ Ձեզ, փուլթ չէ, բարկացեք, բայց սասած ճշմարտութիւն է, լսե՛ք կծու է։

Դուք առանց ընկերների, և լավ ընկերների, չեք կարող ապրել։ Ձեր ամենալավ աշխատութիւնները միշտ եղել են արդիւնք տալ վիճաբանութիւնների և կենդանի խոսակցութիւնների բարեկամների շրջանում։ Պետք է կրկին կենդանացնել այդ շրջանը, որպեսզի փարատվի Ձեր մթնոլորտի մոայլն ու վատութիւնը, և կրկին վերադառնա Ձեր վաղեմի եռանդն ու դրութիւնը։

Դուք պետք է ցած գնեք Ձեր զիկսասորի զավագանը և ընկերներին հետ ընկերաբար վարվեք։ Դուք պետք է հալատը բաժանեք թէ աշխատանքը, թէ արդիւնքը, թէ իրա-վունքները և թէ պարտականութիւնները։ Այլ կերպով «Մշակը» Ձեզ, միայն Ձեզ չի հաջողվի հրատարակել։

Եթե Դուք լինեիք Ձեր առաջիկա դրութիւն մեջ, ևս այդ խորհուրդները չէի տալ Ձեզ։ Ես միշտ այն կարծիքի եմ, որ մեր մեջ գործերը զեւ ընկերաբար վարելը շատ զմաքրութիւններ է հարուստում, հարկավոր է, որ մեկը զիկատառը լինի։ Բայց յրա-դրական գործում այդ կարող է հաջողվել այն ժամանակ միայն, երբ զիկատառը հա-րուստ մեկը կլինի, փողը կտա ու կասե զու լեզուդ լուռ պահիք և միայն քո գործը կա-տարիք։

Այժմ Դուք ինքնեզ Ձեր ապրուստի միջոցները սպասում եք «Մշակից» և այդ ավելի պատճառ պետք է տա Ձեզ՝ հաստատ հիմունքներ լրա գնել նրա գոյութիւնը, որպեսզի Ձեր ապրուստն ևս փոքր չլստե ապահովված լինեք։

Բարոյական կապ, զարգացման, իդեալների, զոհաբերութիւն, — այդ բոլորը շատ զեղեցիկ խոսքեր են, բայց զրանք լինում են գործի սկզբում միայն, և իմ ժամանակին չխնայվեցան «Մշակի» հաջողութիւն համար։ Իսկ երբ գործ մի ուրիշ է եւ և ստանում, այն ժամանակ նյութական հարցը ինքն բառ ինքան ներս է սողում։ Միթե կարելի է փոխել էլյանքի անհրաժեշտութիւնները։ Ի՞նչ պետք է արած, որ մարդիկ այլապես չեն ստեղծված, որ առանց ուռելու, առանց խմելու գործեին։

Ես կատարելապես հաստատում եմ Ձեր կարծիքը իմ մասին (որպես շատերի մոտ բամբասկ էր), որ ես այժմ մասնախառն եմ դարձել։ Ազգատեութիւնը սովորեցրեց ինձ այդ։ Իմ կյանքում կրած ամենագառն փորձերից ես համոզվեցա, որ քաղցած փորով ոչինչ չէ կարելի շինել, իսկ այն օրը, եթե զրպանում մի ուրիշ ունեւ ճաշելու համար, իմ զրավոր աշխատանքը ավելի զեղեցիկ է զուրս գալիս։ Միթե այդքան ծանր հարված-ներ կրելուց հետո, Դուք ևս չհամոզվեցաք, որ փողը լավ բան է։

Թե ի՞նչ անօրինութիւններ եք արել «Մշակի» բառիկա տարվա հրատարակու-թիւն համար, — ինձ հայտնի չէ։ Բայց այդքանը պետք է ի նկատի ունենալ, որ «Մշակի» գալուց տարվա հաջողութիւնը կախված է ներկա տարվա վերջին ամիսների գործողու-

թյուններին: Դուք բավական ժամանակ կորցրելք, իսկ եթե այդ մնացած ամիսներն ես ապարդյուն անցկացնեք, ապազ հաջողութիւնը շատ երկարալիւս պետք է համարել:

Վերջացնում եմ նամակս, հայտնելով Ձեզ, եթե այդ մոտ ժամանակներում մենք որեւէ համաձայնութեան չհասանք, ես ստիպւած կլինեմ հայտարարել, որ «Մշակի» հետ իմ դործակցութիւնը վերջացած է: Այդ ես պետք է անեմ, հաւ ինչ պատճառով. դեռեւ թե՛ այստեղ և թե՛ դավաններում ինձ չեն բաժանում «Մշակից» և ամեն կողմից զանազան հարցերով ձանձրացնում են ինձ. դեռեւ իմ նամակները և փողի ծրարները «Մշակի» խմբագրատան անունով են ուղարկւում. լինեմ, ինձ կհարկավորվի մի ալ խմբագրատան մեջ պարապմունք դտնել (ինարկել, բացի «Մեղուի» և «Նոր դարի»): Կամ մտածել մի սեփական պարբերական հրատարակութիւն սկսելու մասին:

Ցանկանում եմ Ձեզ կատարյալ հաջողութիւն «տացե Աստված, որ իմ հայտնած կարծիքները «Մշակի» ապագայի մասին բոլորովին սխալ հայտնվեն:

Ր Ա Ֆ Յ Ի

Քիֆլիս, 14 հունվարի

1884 ամի.

ՀԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ [ՆԵՐՍԵՍ ԱՐԵԼՅԱՆ]

Շնորհակալութեամբ ստացա Ձեր նամակը, որով խնդրակցութիւն էիք հայտնել իմ կյանքին վտանգ սպառնացող արկածից ազատվելու համար: Ես ամեն տեսակ անազնութեան սպասում էի իմ թշնամիներէից, բայց այդ չէի սպասում: Այսուհետև զգուշ կլինեմ: Երեկոյան 7 ժամից հետո տանից դուրս չեմ գալիս. զիշեք մի քանի անգամ ստացած ինքնուր իմ նախասնայակում: Այժմ երկու բնովովեր ունեմ, երկրորդը ընծա ստացա իմ պարոնից:

Հորեկանի ստիժով կատաղած են, ամեն կեցողութիւնները դործ են դնում արդեւելու համար: Բայց դավաններում սաստիկ արձագանք է գտել այդ միտքը և ամեն տեղ համակրութեամբ են վերաբերվում:

Ուղիղն ասեմ, բարեկամ, ես ամենեւին հոժարութեամբ չունեի, որ այս տարի կատարվեր իմ հորեկանը, դա Գարոնի և մի քանի բարեկամների ցանկութեանն էր: Ես չէի ուզում զբոսել իմ թշնամիներին, որովհետեւ ժամանակները վատ են, իսկ նրանք ամեն ցածութեան ընդունակ... Բայց հիմա որ դործը բավական առաջ է. դիտել, այլիս կես ճանապարհից դառնալը ամոթ է...

Պ. Արծրունու հետ իմ հարաբերութիւնները այժմ բավական լարված են. դադարել եմ նրանց մոտ ճաշ ուտել. տիկնոջ ինտրիգները վերջապես զգացրին ինձ: Ես գիտավորութիւն ունեի այս տարվա սկզբում մի քանի փոփոխութիւններ անել խմբագրատան կազմակերպութեան մեջ. ուր մարտիկ հրավիրել և հներին հեռացնել, որպէսզի «Մշակի» փոքր ինչ կենդանանա: Բայց հնար չեղավ. տիկինը տարավ հաղթութիւնը, իսկ պ. Արծրունին նրա ձեռքում այժմ դարձել է մի շորի կտոր:

Շատ կարելի է, որ բոլորովին դադարեմ «Մշակի» մեջ աշխատակցելուց, և եթե կատարեալ հաջողացնել, այդտեղ նախապատրաստվեմ առաջիկա տարվանից իմ խմբագրութեամբ մի ամսագիր հրատարակել, որի մասին Ձեզ ևս շատ անգամ խոսացել եմ:

Այստեղ շատ վատ տպավորութիւն դործեց ճեմարանից այնքան աշակերտների հեռացնելը: Միթե չկարողացաք այդ խաղաղասիրութեան առաջը առնել: Վարդապետացի շատ հեռագրներ և նամակներ ստացանք, բայց ոչ մեկը չտպեցինք. պահպանելով ճեմարանի վարկը:

Գարոն ինձ ասաց, որ Դուք զբեկ եք, իբր թե Պոլսի ազգ. ժողովը կարինի նախկին առաջնորդ Հարութիւնին եպիսկոպոսին կաթողիկոս է ընտրել: Եթե ճշմարիտ լինի, դա շատ անհաջող ընտրութիւն է: Այդ անձը հայա՛նի է որպէս չափազանց կաշառակեր և շահասեր մարդ, նրա բոլոր արժանավորութիւնը միայն նրանումն է, որ շատ հարուստ է:

Սեղմում եմ Ձեր ձեռքը

ՐԱՖԶԻ

¹ Ակնարկը վերաբերում է իր մտերիմ ընկերներից՝ Գարբիել Միրզոյանին:

² Խոսքը վերաբերում է Արծրունու կնոջ՝ Մարիամ Աղամալյանին:

³ Ակնարկը վերաբերում է Հարութիւնին՝ վեհապետականին:

Թիֆլիս, 12 մարտի
1884 ամի

ՀԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ [ՆԵՐՍԵՍ ԱՖԵԼՅԱՆ]

Ձեր վերջին նամակը ստացա, հանդուցյալ Աբել եպիսկոպոսի ձեռագրի մասին ընդունեցեք իմ խորին շնորհակալությունը: Այդ եպիսկոպոսը մի պատմություն ունեւր գրած, որ բովանդակում էր իր մեջ էջմիածնի վերջին ժամանակների անցքերը, և հասցրած էր մինչև Գևորգի օրերը: Պարսկաստանում մեր տանը եղած ժամանակ, նա շատ անգամ այդ աշխատությունը կարդում էր ինձ մոտ, խիստ հետաքրքիր տեղեկություններ կային նա շարունակում էր այդ պատմությունը մինչև իր մահվան ժամանակը: Հանդուցյալի մահից հետո, այդ թանկագին աշխատությունը անհետացավ նրա թղթի միջից: Ձեզ պետք է հայտնի լինի, որ նա իր ծառայի տանը մեռավ: Ասում են, որ Մանկունին՝ ծառային կաշառելով, նրանից առած և ոչնչացրած լինի հիշյալ ձեռագրերը, որովհետև Գևորգի մասին աննպաստ տեղեկություններ է բովանդակում իր մեջ: Այն ևս ասում են, որ ծառայի ձեռքում մնացած է: Հետաքրքրվեցեք, եթե գտնվի, ևս պատրաստ եմ մի բան տալ և գնել:

Գրում եք, թե ոմանք դիտավորություն ունեն «վարժարանը»² ընդհանուր դրահանակն ամսադիր դարձնել: Թե՛ Դուր և թե՛ մենք ճանաչում ենք այդ մարդիկներին, դրանք «քարվան կորոդներ» չեն: «Փորձերը» սպացուցին, որ միայն կապիտալը չէ, որով կարելի է մի հաջողված ամսադիր կամ լրագիր հրատարակել, այլ հարկավոր են ուրիշ պայմաններ, որ պակասում են այդ պարոններին:

Այստեղ ևս, մեր ձեռնարկության ձայնը լսելով, խոսում են, թե առաջիկա տարվանից պետք է սկսվի «Փորձի» հրատարակությունը, — բայց դրանք խոսքեր են միայն մեզ վախեցնելու համար:

Ժամանակ է, վերջապես, որ աղատվենք բուրժուա խմբագիրներին, որ իրանց կապիտալով խեղդում են մեզ: Նոր երիտասարդությունը պետք է խմբվի մի նոր գործի շուրջը: Ինչով վարձատրեց պ. Արծրունին իմ 12 տարվա ծառայությունը: Այն վատ լուսաների նման, ոչ ինքը օգուտ քաղեց «Մշակից» և ոչ թողեց, որ մենք օգուտ քաղենք. նա այժմ կրկնում է այդ խոսքերը. «Ես մեռնելու եմ, թող «Մշակն» էլ ինձ հետ մեռնե»... Եվ այդպես էլ կլինի, նա չի պիտի կարողանա շարունակել այդ թերթը, բայց ցավում եմ, որ «Մշակը» կմեռնի բամբակած արատավորված...

Ես ուրախ եմ, որ ազատ եմ այդ մեղքից: Ես անցյալ տարվա վերջին ամիսներում խորհուրդ տվի նրան, որ ներկա տարվա համար խմբագրատան կազմակերպությունը փոխվի: Ես խոստացայի, բայց չկատարեց, և ինքը պատժվեցավ, որովհետև ստիպվեցավ շարաթը երկու անգամ դարձնել, իսկ հետո կստիպվի բոլորովին դադարեցնել: Եթե նա ինձ լսեր, դրանցից ոչ մեկը չէր պատահի: Աշխատում ենք վերականգնել այդ լրագիրը, բայց այնքան հույս չունենք, որ այդ անտանելի մարդու հետ կարելի կլինի մի բան անել, մանավանդ, որ այժմ նա ապաստանած է մի կիսախելագար կնոջ յուպկայի ներքո և այնտեղից է ստանում բոլոր խորհուրդները:

Մի ամսագիր, մի շարաթական թերթ հրատարակել, և «Աղբյուրի»³ խմբագրատունը միացնել դրանց հետ, — այդ հարցերը արդեն վճռված են մեր մեջ: Երբ որ այստեղ զալու լինեք, կխոսենք: Գարեոն³ դիտավորություն ունի համալսարան մտնել և մի դիպլոմ ձեռք բերել: Նրա բացակայությունը փոքր ինչ կկազմանի դործը: Մեզ ուրիշ ոչինչ պետք չէ, բայց միայն մարդիկ, — թարմ, հաստատամիտ և տոկուն մարդիկ: Պետք է ի մի խմբել այսպիսիներին, և այն ժամանակ դործը կարելի է հաջողված համարել: Հեղինակությունները փախչում ենք մենք, այդ փոսած հեղինակությունները սպանեցին մեզ: Հարկավոր են նոր մարդիկ, չփչացած մարդիկ:

Ձեր ԲԱՅՅԻ

¹ Վահրամ Մանկունուն և ակնարկում, որը Գևորգ կաթողիկոսի մտերիմը և խորհրդատու էր:

² Մանկավարժական ամսագիր էր, որը հրատարակվել է 1882—84 թթ. Թիֆլիսում:

³ Գարեթիկ Միրզոյանի մասին է խոսքը:

Թիֆլիս, 28 հուլիսի
1887 ամի

ՄԱՅՄԱՊԱՏԻՎ ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴԻ Լ. ԱՐԵՆԼՅԱՆՅ

Պարոն Շիրվանզադեն հաղորդեց ինձ Ձեր բարի ցանկությունը, որով կամեցել էիք նպաստել Հայոցներէ 2-րդ հատորի տարածմանը Բազմի մէջ: Շնորհակալ եմ Ձեր անկեղծ համակրութեան համար: Ամսուս 25-ին փոստով ուղարկեցիք Ձեզ 22 օրինակ, որից մեկը կ'նղուներ իմ կողմից Ձեզ նվեր, մեկը կ'ընծայեք Ձեր զործավորների բնթերաբարանին, իսկ ծնացյալ 20-ը կ'ովանաւեր:

Նույն կապուցի մեջ կ'դանենք 20 անդորբազիր «Սամվելի» բաժանորդագրութեան: Խնդրեմ տարածեք Ձեր ծանոթներին մեջ:

Դեռ «Սամվելի» առաջին գրութիւնը չորս էին լույս տեսել «Արձագանքի» մէջ, եւ շատ տեղերից նամակներ ստացա, ցանկութեան էին հայտնում այդ վեպը առանձին գրքով տպագրված տեսնել: Իմ բնթերաբարների բազմաբնակիւն թափախանութեան տալու համար, ես սկսեցի առանձին գրքով արտատպել «Արձագանքի» մէջ: Մինչև այժմ տպված է 34 թերթ, այսինքն՝ 534 երես: Հուշա ունեմ, մինչև նոյեմբեր ամիսը տպագրութեանը վերջանա: «Սամվելի» առաջին հատորը բազմաքանակ կ'լինի երեք գրքերից, թե գիրքը եւ թե ծավալը տվելի մեծ կ'լինի, քան թե Հայոցներէ 2-րդ հատորը:

Ներկայումս գիրքը եւ ժողովրդի մեջ բնթերաբարութեան տարածելը՝ այն փրկարար միջոցներից մեկն է, որ կապահովէ նրան շատ մոլորութեաններից: Նոր ժամանակակից եւ թարմ մտքերի հետ ծանոթանալով նա կ'ուզի յուր ճանապարհը, յուր բնթերաբար: Եւ «Սամվելի» այդ իսկ նպատակով գրված է, թե եւ նա պատմական վեպ է: Մեր այժմյան գրութեանը նույն գրութեանն է ինչ որ էր չորսրորդ եւ հինգերորդ դարերում: Բայց ցավովն այն է, որ բնթերաբարութեան տարածելու գործը մեկանում խիստ զանգուշ եւ խիստ թույլ կերպով է առաջ դնում: Պատճառը, իմ կարծիքով այն է, որ մեկանում կ'ընթերցանեն զործը միակողմանի է եւ սահմանափակ: Վերջին ժամանակներում բաժնեւորներն ու միտքը տվեցին զարգացումը, եւ ամեն լույս նրանից էին սպասում, առանց մտածելու, որ զարգացումը էլ կարող այն տալ, ինչ որ կարող է տալ մի լավ եւ նպատակահարմար կերպով մշակված բնթերաբարութեան գիրքը: Իմ աշխատութեանների նպատակը մինչև այսօր եղել է եւ պիտի լինի՝ մեր ժողովրդին նոր մտքեր տալ եւ նոր դասակարգների հետ ծանոթացնել: Բայց մեր հասարակութեան մտածող մասը, որ փոքր է շատե հասկանում է այդ, պետք է նպաստի հեղինակին, որ նա կարողանա հառաջ տանել յուր սկսած գործը: Եւ ոչ որից ողորմութեան չեմ պահանջում: Եւ պահանջում եմ այսքանը միայն, որ հայ հասարակութեանը, վերջապես, հոգիանա, որ գիրքը նույնպիսի մի կենսական պահանջ է, որպես հացը եւ ջուրը, առանց որից սպել չէ կարող նա: Իսկ առանց գրքի նա կ'մեռնի թե բարոյապես եւ թե մտավորապես...

Բազում, որ շատ հիմար բարեգործութեանների մեջ ցույց է տվել յուր եռանդը եւ առատաձեռնութեանը, բայց իմ վերաբերութեամբ մինչև այսօր անտարբեր է դնում: Իմ գրքերը ոչ ոք չէ համեմատարար տվելի սակավ թվով եւ տարածվում, քան մի օրեւէ աննշան քաղաքում:

Ձեր եղբորը հայտնի է իմ այժմյան գրութեանը, եթե երկար շարունակեցի, եւ ցավովն պետք է թողնեմ այն ասպարեղը, որ սուրբ էր, որ նվիրական էր ինձ համար: Այսքան տարիների աշխատութեաններից հետո, չբավորութեան մեջ մեռնելը շատ անորոշ է: Իմ բան չէ... մանավանդ, որ առողջութեանս բոլորովին բացառված է...

Թողնեմ այդ տխուր իրողութեանները: Եթե Անդրկասպյան երկրների, նոր հայ գաղթականների մեջ ծանոթներ կամ բարեկամներ ունեք, մասնացույց արեք ինձ, եւ կ'ուղարկեմ նրանց «Սամվելի» բաժանորդագրութեան մի քանի անդորբազիր: Այդ հիմարները, որպես լսեցի, մի գրքի տպագրութեան համար 2000 ոտւրի փող են հավաքել, որը երկրորդ Փարզանի Դարբազի է պետք է դառնա մեր գրականութեան մեջ...

Ընդունեցեք իմ խորին հարգանքը ԲԱՅԶԻ.

Թե գրքերի եւ թե բաժանորդների արծաթը խնդրեմ շատպես շուտով հասցնել ինձ: Երբեք հետե նրանք այժմ պետք են «Սամվելի» տպագրութեան ծախքերը հոգալու:

Թիֆլիս, 1874 9 օգոստոսի

ԱԶՆԻՎ ԲԱՐԵԿԱՄ [Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ]

Այս փոստայով ուղարկեցի Ձեր անվամբ մի կապոց, որ պարունակում է յուր մեջ
խառն օրինակ (1 և 2-րդ հատոր) Բաֆֆիի «Փունջ» կոչված բանաստեղծական և վիպասա-
նական աշխատություններից: Հուսով եմք ներդրելու հանձն կառնեք այդ գրքերը Ձեր
կողմերում տարածելու և գոյացած արծաթը կդարձնեք Թիֆլիս «Մշակի» խմբագրատանը
Արժրունու անունով:

Ցանկալի է հեղինակին լսել Ձեր կարծիքը յուր աշխատությունների մասին, թե
ստանձին նամակով և թե տպագրությամբ: Հուսով եմ, Դուք չեք զլանալու այդ Ձեր
բարեկամից:

Մեր դրությունը նույնն է որպես տեսած էք, տակավին չենք հաշտված անողոր
բախտի հետ...: Ձեր ինձ Գերմանիա գնալու հորդորը մի սաստիկ բաղձանք է թողած
սրտիս մեջ, բայց ինչ միջոցով հասնիլ այդ նպատակին, այդ անորոշ է:

Պարոն Արժրունին առողջ է, բարեուստ է Ձեզ, միայն խեղճը անդադար աշխատու-
թյունից կմախք է դարձել:

«Մեղվականները» առելու թյուր ղեպի «Մշակը» ու նորա աշխատակիցները օրես-
օրե ավելի տղեղ կերպարանք է ստանում: Ցավալի է, որ գործող երիտասարդությունը
այդպիսի ռևակալ հարաբերությունց մեջ է զանվում...

Ձեր ազգակիցը պ. Բ. Պատկանյանը* այստեղ է. բայց դեռ երեսը տեսած չենք:
Ես դարձանում եմ, այդ պարոնը մոտ տարիներումս երկու անգամ Թիֆլիսում զանվե-
ցավ, բայց միշտ յուրյան թաղուստի մեջ պահեց:

Այժմ պատրաստում եմ «Փունջի» 3-րդ հատորը տպագրության համար. այդ աշ-
խատությունը եթե ոչ նյութապես, բայց բարոյապես մխրթարում է մեր կյանքի դառ-
նությունը:

Եթե գրքերից ավելի ծախվելու լինի, հայտնեցեք կրկին ուղարկել:

Ձեզ միշտ հարգող Հ. ՄՆԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ.

Մեր հասցեն:—

Тифлис, Редакция газеты «Мшак»
Акопу Мелик-Акопяну.

* Քերովրե Պատկանյանին է ակնարկում.